

հաւարած է Հիւանդանոցին շինութեանը վերաբերեալ բոլոր պաշտօնական գիրերը, վաւերաթուղթերը, ծախսացուցակները ու բժշկական տեղեկագիրները, ամբողջով նաեւ դանազան Յիշատակարաններ ու Հիւանդանոցին պարտեզը փոխադրուած բոլոր տապանաքարերուն Արձանագրութիւնները:

Այս Հիւանդանոցին Հիմնադիրը կը համարուի՝ հին Արքունի բժիշկ Մանուէլ Շաշեան († 1858), ինչպէս կ'իմանանք ասոր մէկ իւզաներկ պատկերէն որ կը գտնուի Աննատիկի Միթարեան Աանքը եւ վրան ունի հետեւեալ գրութիւնը՝

Ըմմանուէլ Շաշեան

Որդի Պողոսի

Իկո. համալսարանին Բատուարի

եւ բժիշկ արքունի

Հիմնադիր

Սուրբ Յակոբայ Անկելանոցի, եւ այլն

Ինձ կը թուի սակայն, թէ սոյն գրութեան մէջ եղած հիմնադիր բառը պէտք չէ իր տառական իմաստովը առնել. ինքը Մ. Շաշեան՝ իբրեւ բժիշկ՝ զգացուցած ըլլալու է՝ համաճարակի սաստկութեան միջոցին, թէ ամենակարեւոր է ժանտախտաւորները մեկուսացնել, աստին փոխանցիկութիւնը չքացնելու համար, եւ այսու յաջողած՝ շինել տալու, տաղաւար-մեկուսարան մը, ուր կը փոխադրուէին ժանտախտէ բռնուողները. եւ այս կերպով է ահա ըստ իս՝ որ այդ անուանի բժիշկը համարուած կամ նկատուած է Հիմնադիր Հիւանդանոցին, զոր ուրիշ բարերարներ՝ որոնց անունները գրոշմուած կը մնան դրան վերեւը, կառուցին յետոյ՝ Ս. Յակոբայ Հիւանդանոցն՝ անունով:

Այս Հիւանդանոցը իր մէջը ունի մատուց մը սիրուն, նուիրուած Ս. Յակոբ Մճբնայ Հայրապետին եւ շուրջ բոլորն ալ 45 հատ քարաշէն տուններ իբրեւ կարուած, որոնց ամէն մէկին ճակատը հայերէն արձանագրուած է նուիրատու բարերարներուն անունները՝ Ազարեան, Քեօշեան եւ ուրիշներ:

Ունեցած է նաեւ Աղքատանոց մը 1861 ին եւ աղքատ տղաքներու համար ալ դպրոց մը 1866 ին, բայց ատենք այժմ վերցուած են:

Մեր հին բժիշկներէն Մանուէլ Շաշեան եւ որդին՝ Բաւլաքի Շաշեան, Յակոբ Տափուրեան, Գասպար պէյ Մինապեան եւ Յարութիւն Պէտան

1 Ինչպէս բժշկական վարժարանի մը պէտքն ալ զրացուցած էր սա Սո. թման Մահմադ անին եւ հաստատուած:

պէյ, մեծ երախտիք ունեցած են այս Հիւանդանոցին թէ իբրեւ բժիշկ եւ թէ իբրեւ Հոգաբարձու:

Այս բժիշկներուն օրերէն մինչեւ այսօր Ս. Յակոբի Հիւանդանոցը՝ բարեջան Հոգաբարձուներու եւ կարող բժիշկներու շնորհիւ, հետզհետէ բարելաւութեան մէջ մտած է եւ կը դարձանուին հոն անխտիր երկսեռ աղքային հիւանդներ:

* * *

Ս. Յակոբէն դէպի վեր ելլելով Բանկալթիի Զայրը կոչուած փողոցին մէջ կը գտնենք Աղքատասէր Տիկնանց վարժարանը, ուր երկար տարիներէ ի վեր կը դաստիարակուին հայ աղքատիկ աղջիկներ, շնորհիւ օժանդակութեան խնամակալ հայ-կաթողիկ Տիկնանքուն: Աւելի վեր մէջտիտիէ անուն փողոցին մէջ Անարատ Յղութեան Քերց վարժարանը, որ հաստատուած է 1902 ին եւ ուր հայ աղջիկներու ուսում կ'առնեն անձնուէր հայ մայրապետներու հսկողութեանը ներքեւ: Այս կողմերը կը գտնուէր երբեմն «Բազրատունի» առեւտրական կիրակնօրեայ վարժարանը, այժմ անհետացած:

* * *

Բանկալթիի մեծ պողոտային վերջածայրը հասնելով, հոն կը տեսնենք Ա. Ինննայի Միթարեան Միթարեան հիւանդանոցի, պատկառելի զպրոցը, որուն սկզբնաւորութիւնը կը կորնչէ 1907 դարու առաջին քառօրդին մէջ:

Այս վարժարանը որ իր հաստատութեան հարիւրամեակը տօնեց 1925 ին, բացուած է նախ ինչպէս ըսի վերեւ եւ ինչպէս կ'իմանանք շ. Եղիշէ Ա. Գաֆթանեանի ձեռագիր մէկ պատմութենէն Պերայի Թէփէ պաշտ կոչուած տեղը, վերակացութեամբ եւ տեսչութեամբ Ա. Ինննայի Միթարեան շ. Սերովէ Ա. Մէրճանձեանի որ իբրեւ օգնական ունէր՝ Եղբայր Յակոբոս Եղէկեան:

Մինչեւ 1827 դեկտ. 27՝ կը շարունակէ վարժարանը նոյն տեղը, բայց կը խափանուի կրօնական հալածումի երեսէն: Հալածանքին դադրելէն յետոյ՝ 1830 մարտ 1 ին կը վերաբացուի Չարխեան շ. Աթմանէս վարդապետի տեսչութեամբ: 1836 ին կը փոխադրուի Մէրթէպ փողոցը յատուկ գնուած տուն մը որ կ'այրի 1839 ին:

Անմիջապէս փայտաշէն շէնք մը կը կառու-

ցուի հոն պարտէզին ծայրը, եւ 1847 ին քարուկեր կը վերաշինուի այն:

Մինչեւ 1857 վարժարանը ցերեկօթիկ, այս տարիէն սկսեալ գիշերօթիկ դպրոց մ'ալ կ'ունենայ քովը եւ կը շարունակէ, բայց 1865 ին Միթարեանութիւնը նկատելով՝ որ աշակերտներու թիւը հետզհետէ կը շատնար եւ շէնքը նեղ կու գար, կը ստիպուի Բանկալթիի արդի տեղը գնել, ու հոն փոխադրել վարժարանը՝ գիշերօթիկ եւ ցերեկեայ:

Ընդարձակ պարտէզներու մէջ՝ հովանաւոր ծառերով շրջապատուած դպրոց մ'է Ա. Ինննայի Միթարեան այս հաստատութիւնը որ եւ վաշատուն, ուր Միթարեանութիւնը 100 եւ աւելի տարիէ ի վեր կը թած է սերունդներ եւ հայ Ազգին պարգեւած է ու կը պարգեւէ անդադրում գիտուն, ուսեալ եւ բարեկերթ զաւակներ:

Շէնքը թէեւ հին ու խարխուլ նիւթապէս, բայց բարոյապէս ամուր է ու հաստատ, եւ եղած է միշտ մտամշակութեան ու գիտական ուսման համար յարաբողջ անդաստան մը:

Անաստունը ընտիր Մատենադարան մը ունի եւ հայ թերթերու ամբողջական հաւաքածոյ մը, զոր մեծ աշխատութեամբ ու զոհողութեաներով ձեռք բերած է բազմերախտ գրահաւաք շ. Եղիշէ Ս. Ա. Գաֆթանեան, որուն յիշատակը անմոռաց կը պահեն միշտ, որովհետեւ անոր շնորհիւ կը կրցած են թղթատել հոն հաւաքուած բոլոր թերթերը, իմ հայ բժշկական պատմութեանս առաջը կերտելու համար:

Վարժարանին այժմեայ տեսուչը, միանգամայն Մեծաւորը՝ շ. Հմայեակ Համբարեան ուսումնական վարդապետը միշտ վառ կը պահէ հոն կրթական գործը, եւ մեծ ջանքերով սկսած ու աւարտած է քարուկեր նոր վարժարանի մը կառուցումը միթարեան հողը վրայ:

Հոն կատարուած են երեւելի Հանդէսներ որոնց ամէնէն յիշատակելիներն են Միթարեան Միթարեանութեան հաստատման երկարւորամեակը 1901 ին, եւ շ. Եղիշէ Ս. Ա. Գաֆթանեանի 1903 ին: Աղքահանայութեան յիմնամեակը մասնակից եղան գային բոլոր իշխանութիւնները, որոնք այս երկու նշանաւոր Յօրեխաններուն, որոնք համահայութեան գրական տօները կազմեցին: Այս վարժարանին աշակերտը (նախկինք եւս Այս վարժարանին ուսուցիչ եւ կրթիչ Միթմէջն ըլլալով) իրենց ուսուցիչ եւ կրթիչ Միթարեան վարդապետաց հսկողութեամբ եւ քաղաքեան վարդապետաց հսկողութեամբ «Ուսումնաջարներութեամբ հրատարակեցին «Ուսումնաբար» անուն ամսաթերթ մը շատ շահեկան, որ հազիւ երեք ու կէս տարի կեանք ունեցաւ:

(1911-1915), դադարելով ընդհանուր պատերազմին պատճառաւ:

Ա. Ինննայի Միթարեաններու այս վանատուն-վարժարանը ունի բովեղը իրեն տարեկից եկեղեցի մը յանուն Անարատ Յղութեան Ս. Ս. Մարեմայ կառուցուած, որ նախապէս փոքրիկ ընդարձակուած է 1902 ին (այսինչ-օգոստոս) Գասպեան Ա. Ինննայի առատաձեռն օժանդակութեամբ:

Վարժարանին պարտէզին շուրջ բոլորը կը պատեն բազմաթիւ կրպակներ եւ բաւական կը պատեն բազմաթիւ տուններ, որոնք Միթարեանութեան սեպհական կալուածներ են, եւ որոնց շինութեանը մեծապէս ջանադիր եղած է շ. Գրիշտիս Գալէմբարեան իւր մեծաւորութեան տանը:

* * *

(Շարունակելի:) ԴՅՏ. ՎԱՆՈՍԻ Յ. ԹՈՐԳՈՍՅԱՆ



ՅՈՐԳՈՍԻ ԿՈՅ ՆԱՀԱՏՈՒՄ

Ա.

Այս տարի հայ նահատակների սովորական Ապրիլեան սպասուրը անօրինակ մեծ հանդիսաւորութեամբ տօնուեց... Հոռոմում: Այս, Հոռոմում, վատիկանի դարաւոր յիւլի մէջ, կարգիւնալները եւ հայ ու օտար լիծի մէջ, կարգիւնալները եւ հայ ու օտար լիծեան ներկայութեամբ: Ընտրեալ եւ ասում պէս մտքով, որ ներկաները բոլորն էլ յատուկ հրաւիրատուներով էին եկած, այլատուկ վատիկանի հարիւրաւոր սենեակներն իսկ էին բաւականանայ միմիայն օտարականներին բովանդակելու համար, որոնք կամ իբրեւ ուխտաւոր, կամ իբրեւ անցորդ, հազարներով, բիւրերով ողողում էին Յաւիտենական Քաղաքը: Ժողովի հանդիսաւորութեան աստիճանը ցոյց տալու հա-

1 Այս աշխատութեան համար եւ օգտուել եւ բազմաթիւ հայերէն եւ օտար լեզուներով, տպուած եւ ձեռագիր, աղբիւրներէց, որ ազնուարար իմ տրամադրութեան տակ դրին Հոռոմում, Լեւոնեան Հայ վարժարանի տեսուչ Գերայ. Տ. Ս. Ս. Վ. Տէր-Արքահանեան եւ Ա. Ինննայում, Միթարեան վանքում, վերայ շ. Ն. Վ. Ա. Ինննայի, որոնց յայտնում եւ անկից շնորհակալութիւնս:

մար բաւական է ստել, որ հրաւիրատուներին մէջ պահանջուած էր, որ աշխարհականներս գայինք Փրակով եւ սպիտակ փողկապով (cravate), բայց առանց ձեռնոցի, իսկ կանայք նոյնպէս սեւ հագուստով, բայց ոտքից գլուխ ծածկուած եւ գլխի վրայ սեւ շղարշ (voile) դրած: Բոլոր պաշտօնական անձերը եկել էին իրենց հանդիսաւոր զգեստներով եւ շքանշաններով:

Թիւրքմացութեան տեղիք չտալու համար պէտք է ստեմ, որ պաշտօնապէս հանդէսը կազմակերպուած էր կրօնաւորական կարգի հիմնադիր մի խտաւացի վարդապետի եւ մի հայ ցահատակի յիշատակին: Բայց յանուն Հայոցս այնտեղ կարգացուած ուղերձի եւ մանաւանդ Քահանայապետական Աթոռի բարձրութիւնից Ս. Պապի կողմից եղան այնպիսի արտայայտութիւններ, որ ժողովն իրապէս ընդհանուր Հայ Նահատակների սգատօնի կերպարանք առաւ...:

Բայց նախ պատմեմ թէ ո՞վ էր այդ հայ նահատակը:

Ժէ. դարի վերջին քառորդին եւ մանաւանդ ԺԼ. դարի սկիզբները Կ. Պոլսի Հայոց պատրիարքական Աթոռը պայքարի եւ անկարգութիւնների թատր էր դարձել: Անարժան եկեղեցականներ՝ իրենց կուսակիցներով, կաշառքների եւ հազար ու մի դաւերի միջոցով միմեանց տապալելով պատրիարքական աթոռն էին գրաւում եւ անընդհատ յուզմուք ու խռովութիւն յառաջացնում ժողովրդի մէջ: Միեւնոյն ժամանակ տիրում էր եւ պարբերական հալածանք մեծաւ մասամբ այդ իրողութիւններից տժգոհ՝ ուրոյն եկեղեցիները յաճախող կամ ինչպէս այն ժամանակ ասում էին «Փրանկացած» Հայոց դէմ: Այս եղելութիւնները ժամանակի տիրող լմբոնումների արդիւնք էին եւ Պատմութեան սեպհականութիւն են դարձած, որով կարելի է այժմ հանդարտ մտքով կարգալ եւ պատմել: Բոլոր պատմագիրները մանրամասն խօսում են այդ դէպքերի մասին: Հետաքրքրուողները կարող են կարգալ մի լուրջ եւ բարեխիղճ աշխատութիւն, ուր ամփոփուած են, «Մանթապրութեանց» ձեւի տակ, այն շրջանի բոլոր գլխաւոր պատահարները: Միայն թէ այնչափ տխուր են Պատմութեան այս էջերը, որ ինքն իսկ հեղինակը ստիպւում է կիսատ թողնել իր նկարագրութիւնը, «սիրտս կ'արիւնէ, ջգերս կը գրգռէ» ասելով եւ այսքան է աւելացնում թէ այդ հալածանքների գո-

հերի յիշատակը իրեն համար «ոչ նուազ նուիրական են այսօր եւ սուրբ քան 1895ին եւ 1896ին ջարդուած ընդհանուր հայ մարտիրոսների յիշատակը»²: Երբ այս տողերը գրուած են, աւելի սոսկալի ջարդերը (1915—1917) դեռ տեղի չէին ունեցած...:

Այս՝ տխուր էջեր, տխուր՝ այն պատճառով եւս, որ այդ հալածանքների ողորմելի հեղինակները չէին զգում թէ իրենց արարմունքով ոչ թէ միայն անկարող էին իրենց եկեղեցին եւ դարձնել՝ այնտեղ այլեւս յաճախել չուողներին, այլ, որ աւելի կարեւոր է, նրանք պարզապէս ծառայում էին տիրող կառավարութեան եւ նրա պաշտօնեաների շահերին, եւ գործիք էին դարձել սրանց ձեռքում: Այս պաշտօնեաները, վէպիւր, մօլլա կամ հասարակ ոստիկան, նախ առատօրէն կաշառք էին կորում նրանցից եւ իրանց գրպանները լցնում. յետոյ իրանց կալանաւորած հայերին երկար ժամանակով տաժանակիր աշխատանքների դատապարտելով, ձրի գործաւորներ էին հայթայթում Կ. Պոլսի պետական նաւարաններին: Եւ վերջապէս՝ իրենց կրօնական մոլեռանդութիւնն էին յաղեցնում տեսնելով թէ ինչպէս քրիստոնեաները, առաձնապէս հայերը, անընդհատ իրար մատնելով եւ իրանց պառակտումներով իրենց ներքին ոյժն են ջլատում, որից իրենք օգուտում էին կալանաւորուածներին մահուան սպառնալիքի տակ մահմետականացնելով: Երկու բարձրաստիճան թուրք պաշտօնեայ մեծ դեր են կատարած այն ժամանակի այս տխուր եղելութիւնների մէջ: Զօրլուրդ Ալի փաշան, մեծ վէպիւրը, մեր նահատակի դատաւորն, որին զազդիական դեսպանը, 1707 Նոյեմբ. 30 թուով Հոռոմ Ս. Պապին գրած նամակում անուանում է «ազահ, այսինքն կաշառակեր եւ անգութ» (avare et cruel): Այս դաժան մարդը մեծագումար (դեսպանը ասում է une somme considerable) կաշառք առնելուց յետոյ, իր իսկ խոստովանութեամբ՝ անմեղ ճանաչած ամբաստանեալներին նախ մահուան էր դատապարտում եւ ապա այս մահուան սպառնալիքի ոյժով նրանց մահմետականացնում էր: Երկրորդը Ֆէյզուլլահ անունով մի դատաւոր, որ իբր սուլթան Մուհամմէդ Դ. ի

² Տօքթ. Վահրամ Յ. Թորոմեան, Մանթապրութիւնք Երեմիա Չէլչպի Բէօմիւրճեանի «Ստամբուլի Պատմութեան» Վիեննա, Միտիթարեան Տպարան, 1913, էջ 258:

անդրանիկ որդու դատարարակ մեծ ազդեցութեան տէր էր ամբողջ Թիւրքիայում: Այս կրօնամոլ գեներալը, որ դեռ կարին եղած ժամանակ ամէն կերպ նեղութիւն է տալիս այնտեղից դէպի Պարսկաստան եւ դէպի Կովկաս ուղեւորուող միտինոնարներին, երբ տեղափոխուեց Ադրիանուպոլիս եւ ապա Կ. Պոլիս, թէ անձամբ եւ թէ նամակներով շարունակ գրգռում էր վէպիւրներին եւ մօլլա-դատաւորներին «Փրանկները» դէմ: Ֆէյզուլլահ՝ տխրահոգակ եւ մի եւ նոյն ժամանակ տարաբախտ Աւետիք պատրիարքի հօր պաշտպանն եւ բարեկամն է եղած:

Դառնանք այժմ օրուան հերոս հայ նահատակին, որ էր Տէր Կոմիտաս Բախանայ Բէօմիւրճեան:

Բէօմիւրճեան ընտանիքը, 1600ի սկիզբները Ակն քաղաքից գաղթել է Կ. Պոլիս: Գաղթողը թուրք Մարտիրոս անունով քահանան՝ ունէր 4 դուստր, որոնց մին՝ աղջիկ, իրենէ անուանով եւ Յը մանչ, Երեմիա, Կոմիտաս եւ Մարտիրոս: Սրանցից առաջինը՝ Ժէ. դարի նշանաւոր գրագէտ Երեմիա Չէլչպիսն էր, ջերմ հայրենասէր, ուսուցիչասէր եւ կրօնասէր, հեղինակ պատմական ուսումնասիրութիւնների, որոնցից մական տեսած միայն «Ստամբուլի Պատմութիւնը», Դոկտ. Թորոմեանի ջանքով, իսկ միւս աշխատութիւնները (Պատմութիւն Օսմանցոց թագաւորութեան, Պատմութիւն Խորենացոց եւ ի վերայ Բազրատունեաց եւ Ռուբինեանց, մնում են անտիպ: Կոմիտաս ու Մարտիրոսը քահանայութեան կարգ են ընդունած:

Կոմիտաս ծնուել է 1656ին Կ. Պոլսի Վլանկա թաղում: Փոքր տարիքից մեծ սէր ունէր ուսման եւ իր ուշիմութեան շնորհիւ, այն ժամանակի պայմանների ներածի չափ ուսում է առել: Ամուսնացել է Կեսարացի Հուրի (Մարիամ) անունով մի աղջկան հետ եւ Թոքթի առաջնորդ Կիրակոս եպիսկոպոսից քահանայ է ձեռնադրուել եւ նշանակուել է Սամաթիա թաղի Ս. Գեորգ եկեղեցու աւագերէց: Նրա կենսագրիւնից մէկն այսպէս է պատմում Տէր Կոմիտասի արձանագրութեամբ եւ զիտութեամբ ժանիքը. «Սրբութեամբ եւ զիտութեամբ հոգակուած էր ազգին բոլոր վարդապետաց մէջ, սիրուած եւ մեծարուած ամենէն, նոյն իսկ օտարազգիներէն: Բոլոր ժողովուրդը իսկ օտարազգիներէն: Բոլոր ժողովուրդը կը վազէր Սամաթիա՝ երբ լսէր թէ Տէր Կոմիտաս քարոզ պիտի տար՝ անոր քարոզ-

ները հիւթեղ եւ տիրոթելի էին, ձայնը հնչուն, խօսելու ժամանակ կը յուզէր լսողները: Այս գեղեցիկ ձիւրքերուն համար էր, որ ամէն տարի աւագ ուրբաթ օրը, իրեն որ ամէն տարի ժողովրդէն շնորհրուունքն էր — բոլոր ժողովրդէն շնորհուունքն էր — լացի քարոզը խօսիլ եւ կտակին հուած — լացի քարոզը խօսիլ ով որ աւետարանը կարգալ. այն օրը ով որ Ս. Գեորգ եկեղեցին մտնէր, ինչ դաւանութեան պատկանէր եւ որչափ քարասիրտ ըլլար, ստիպուած էր գոնէ շիթ մը արտասուք կաթեցնել աչքերէն: Այս յաջողութեամբ զիտած էր նա բոլոր ժողովրդեան սիրտը եւ գրեթէ պաշտելու աստիճանի կը հասնէր անոր յարգանքը. մինչ անդին միւս քահանայ իրենց տղիտութեամբ եւ անկարգ վարչապետութեամբ արհամարհանաց միայն քով ժողովրդեան արհամարհանաց միայն, արժանացած, չար նախանձով կուրացած, ատելութիւն միայն կը զգային Տէր Կոմիտասին դէմ»³:

Տէր Կոմիտաս աշակերտել է Այնթապի Մինաս վարդապետին որ պաշտօն ունէր Ղալաթիայի Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցում, եւ հաւանականաբար կաթողիկոս դաւանութեան էր յարած, որովհետեւ իր ծանօթ նուրթեան էր յարած, որովհետեւ իր ծանօթ աշակերտները, Սարգիս եպ. Եւզոկիացի, «Սահէթճի» կոչուած, Յարութիւն արքեպ. Լեւոնեան, ինքը Տէր Կոմիտաս եւս կաթողիկ վարդապետութիւնը սկսան դաւանել: Մինաս վարդապետ երբ Երուսաղէմի պատրիարք եղաւ՝ վանքի միաբաններից մի քանիսին իրենց անկարգութիւնների համար պատժեց: Սրանք էլ եկան Պոլիս ամբաստանեցին թէ «Մինաս պատրիարք Փրանկացեալ է» եւ այս ամբաստանութեան հիման վրայ Աւետիք պատրիարք Կառավարութեան ձեռքով նրան Պոլիս բերել տուաւ, ուր տաժանակիր աշխատանքի դատապարտուեց: Իսկ Աւետիք իր անձի վրայ միացրեց Երուսաղէմի պատրիարքութիւնը:

Դեռ եւս 1684ին Կ. Պոլսում վերոյիշեալ Սարգիս եպիսկ. Եւզոկիացին մի խումբ էր կազմել, որ առաջին անգամ սկսել էր գործածել «կաթողիկ» անուանակոչուած թիւնը: Այս խումբի մէջ հետզհետէ մտնում են ծանօթ ժամանակակից դէմքեր, ինչպէս Մծիկեթացի (Թիֆլիցցի) Պետրոս վարդապետ, Էրզրումցի Ստեփան վարդապետ, ապա Սեբաստացի Միտիթար վարդապետ, ապա զայ Աբրահայրը, որոնց միանում է եւ Տէր

³ Զ. Յ. Վ. Թորոմեան, Վարք Միտիթարայ Աբրայի, Վիեննայի 1901:

քառասուն եւ վասն ինունց ի նոցանէ՝ մատոյց ուղերձս մահու մատնել զնոսա...»:

Այս 9 հոգին կարճ դատավարութիւնից յետոյ վէպերը Ալի փաշան, որի գրպանն արդէն նոր կաշառքով լցուել էր, մահուան է դատապարտում: Այս մահապարտների մէջ էր նաեւ Սսի նախկին կաթողիկոսն եւ ապա Կ.Պոլսի պատրիարքը՝ Մատթէոս: Ձի-նուորները տանում են նրանց կառափնատեղին: Խեղճ դատապարտեալները աղաչում պաղատում են որ նրանց չսպանեն, երդում են որ իրենք «Քրանկ» չեն, այսինքն տէրութեան դէմ լրտես կամ օտարի դործիք, այլ հաւատարիմ հպատակ են եւ հայ: Ոչինչ չի օգնում: Մի բան միայն կարող էր նրանց մահուանից ազատել եւ դահիճները սուրը նրանց գլխին բռնած առաջարկում են մահ-մետականութիւն ընդունել: Առաջին վախ-ցողն ու ուրացողը լինում է Մատթէոս պատրիարք, որին հետեւում են բոլոր միւսները: Այս ուրացումը սրբում է նրանց բոլոր ծանր յանցանքներն, ինչպէս էր «Քրանկութիւնն» եւ «լրտեսութիւնը» եւ նրանք ազատում են իրենց կեանքը: Դրանցից Մատթէոս՝ նախ թագնուում է երոսպացիների տունը եւ յետոյ նրանց օգնութեամբ յաջողում է փախչել Եւրոպա եւ վերջապէս հասնում է Հռոմ, ուր եւ մեռնում է:

Բայց գլխաւոր անձն, որին ուզում էին ձեռք գցել, Տէր Կոմիտաս, զեռ ազատ էր: Նա պահուում էր բարեկամների տանն եւ իր ժամանակը անցնում էր կրօնական գրքեր կարդալով: Իր սրտի թախիժը ստիպում է նրան նոյն իսկ երեմիական ողբեր յօրինելու: Յառաջ բերեմ այս Ողբից մի քանի տուն.

Կողկողազին դիմօք զազգն իմ աւաղեմ
Եւ փղձկեալ սրտէս լալով արտասուեմ
Ձաղնութիւն ազգիս իմ յիշեմ
Ոչ հանդուրժեալ սրտէս լալով արտասուեմ,
արտասուեմ, արտասուեմ:

Քանզի եղեաք գերի մեք օտար ազգաց,
Ծաղր եւ արհամարհանք մէջ համայն
ազգաց,
Յամօթ եւ նախատինք մեր բարեկամաց
Վասն այն ողբամ եւ յորդ արտասուեմ:

Չոմանս բանտ մատնեն, զոմանս տու-
գանեն,
Չոմանս բրածեծ առնեն, զոմանս կաշառեն
Եւ զոմանս բռնութեամբ հաւատոյ հանեն;

Տէրն առէ՛ յարիցէ ազգ ազգի վերայ,
Բայց ազգն մեր յարեան միմեանց վերայ,
Եղբայր զեղբայր մատնեց, երէց քահա-
նայ:

Վասն աղէտի ազգիս բանք շարեալ հիւսին,
Վասն այն ողբամ լալով եւ յորդ արտասուե-
լով...:

Բայց վերջապէս գտնում են նրա թաղստեան տեղն եւ գիշերանց ձերբակալում: Գողղիական դեսպանը 1707 Նոյեմբեր 5 թուով իր կառավարութեան ուղարկած տեղեկագրում այսպէս է պատմում նրա կալանաւորումն եւ դատապարտութիւնը:

«Տէր Կոմիտաս յարդուած էր իր ազգից իր բարի վարքի համար եւ եռանդուն կաթողիկ էր: Այս պատճառով այլեւայլ հարձանքներ կրեց եւ թիարան դատապարտուած լինելով 6 ամիս յառաջ, իր ազգի մեծամեծները նրան ազատեցին կարեւոր մի գումար կաշառք տալով:

«Նոյեմբեր 3ին մեծ վէպերի պաշտօնեաները, նրա հրամանով, «Քրանկ» Հայեր էին փնտռում ձերբակալելու համար, եւ գլխաւորաբար Տէր Կոմիտասին: Ոստիկանները եկան նրա բնակած թաղն, յարձակեցան հարեւան սների վրայ եւ մեծ յուզմունք ու խռովութիւն յառաջ բերին:

Տէր Կոմիտաս լսելով այս աղմուկը, ոչ միայն չփախաւ, այլ իր տան դուռն ելաւ եւ հարցրեց վէպերի ոստիկաններին — «Ո՞ւմ էք փնտռում»: Պատասխանեցին — «Տէր Կոմիտասին»:

«Ես եմ ասաց նա, հանդիստ թողէք այդ մարդիկներին: Բռնեցին, տարին բանտ եւ ամիս 5ին հանցելն մեծ վէպերի առջեւ, ուր գտնուած էր նաեւ Տէր Յովհաննէս պատրիարքը: Վէպերը կատարած կերպարանքով հարցրեց. «Ինչո՞ւ Քրանկ դարձար»: Նա պատասխանեց. «Իրեւ քահանայ, կարծեցի թէ իմ պարտքս է իմ դաւանած կրօնս ուսումնասիրել, ուրիշներին սորվեցնելու համար, եւ գտայ, որ հայերի մէջ կային այնպիսի մոլորութիւններ, որոնց չէի կարող հետեւել իմ խղճմտանքովս»:

«Վէպերը հարցրեց. — Ի՞նչ մոլորութիւններ»:

«Տէր Կոմիտաս պատասխանեց — բաւական գիտե՞ս քրիստոնէական կրօնն, որ կարողանաս որոշել»:

«Վէպերն ասաց. գիտե՞ս, որ քեզ կարող եմ մեռցնել»:

— Ինձի շնորհք արած կը լինիս հաւատքիս համար ինձ մեռցնելով, պատասխանեց Տէր Կոմիտաս, բայց եթէ իմ արեւնս թափես, վերջին դատաստանի օրը Աստուծոյ առջեւ քեզնից հաշիւ կը պահանջեմ»:

— Վէպերը սարսափելի բարկացած ոտք ելաւ եւ դարձաւ պատրիարքին. «Ի՞նչ ես այս մարդու արեան պատասխանատուն»:

«Պատրիարքը պատասխանեց. «Թող պատասխանատու լինի նա, որ ձերբակալեց»:

Վէպերը բազմեցաւ իր տեղն եւ Տէր Կոմիտասին դառնալով ասաց. «Այս մարդիկը ամբաստանում են քեզ թէ դուն քու ազնադէ քեզնով ուրիշ աղանդի ես հետեւել»:

Տէր Կոմիտաս պատասխանեց. «Քեզ համար ո՞րն է լաւագոյնը»:

Վէպերը ասաց. «Ինձ համար երկուքն էլ վատ են»:

«Ուրեմն քեզ ի՞նչ փոյթ թէ ես ո՞ր հաւատքն ունիմ» պատասխանեց Տէր Կոմիտաս:

«Այս պատասխանի վրայ վէպերը հրամայեց, որ տանին սպանեն նրան: — Եւ նոյն րոպէին տանջամարան տարին նրան երկու ուրիշ ձերբակալեալ Հայերի հետ...»:

Տէր Կոմիտաս բանտի մէջ խոստովանուում է իրեն նման բանտարկուած մի այլ «Քրանկ» քահանայի, եւ պատրաստուում է մահուան:

Թէ տանջարանում եւ թէ ապա գլխատման տեղում դահիճները շատ են աշխատում, որ նրան եւս մահմետականացնեն, բայց նա բաց է բաց մերժում է:

Երբ տեսնում են թէ մահուան սպառնալիքը չէ ազդում, փաղաքշական միջոցները են դիմում. բայց Տէր Կոմիտաս հաստատ է մնում իր կրօնի վրայ, հետեւապէս տանում են նրան գլխատելու:

վրայ, այդտեղ ծունկ է չորում: Նա հաւատ էր սեւ կապայ, գլխին դմբէթաձեւ եկեղեցական խոյր ունէր դրած, մօրուքը ալեխառն էր, ձիւղ 50 տարեկան էր:

Գլխատման նկարագրութիւնը քաղում եմ «Կաթողիկէ Արձագանդի» մէջ տպուած կենսագրութիւնից.

«Դահիճը Տէր Կոմիտասի հրամայեց, որ հոն ծնրադրէ. Տէր Կոմիտաս խոյրն հաւանակեցաւ: Դահիճագետը՝ Յուդայի պէս մակերպեցաւ: Դահիճագետը համբուանսուրբ շրթունքով անոր մօրուքը համբուրեց ուղձոխային թելադրութեամբ հրապուրել սկսաւ. «Եկուր սիրելիս, զեռ հազիւ 50 տարեկան ես. մեղք է քեզի, որդուց եւ դատերաց տէր ես. ընդունէ մեր կրօնքը որ ազատիս. մեծ պատիւներու ու պարգևներու կարժանանաս: Ահա մեծ մեծ կաթողիկոսն էլ (խօսքը Մատթէոսի մասին է) տաճկաւ (խօսքը Մատթէոսի մասին է) տաճկաւ...» ըսաւ, բայց երանելին եւ ոչ մի բառ արտասանեց, որովհետեւ զբաղուած էր եռանդեամբ «Երանեալ են ամբիժք» սաղմոսը քաղելով, երբ աւարտեց, գլուխը վերցնելով ըսաւ դահիճագետին «ես քրիստոնէայ եմ. իմ կրօնս չեմ ուզեր ուրանալ. ի դուր մի նեղեր զիս, ինչ որ քեզ հրամայուած է ան կատարէ»:

Դահիճը զինք այն վայրէջ վար առնելով ճամբայ ելաւ:

«Թափօրը կամ թէ յուղարկաւորութեան հանդիսական կաղմակերպութիւնը պատրաստուած էր արդէն: Առջեւէն կարգ մը փոքրահասակ տղաք, առանց անդադարունալու թէ այն հանդէսը ինչ նպատակ ունէր, կը վազվզէին. ետեւէն 2 կամ ըստ ձեռքերին ետեւէն կապուած, կարգ մը վարոցաւորներէն ու դահիճներէ շրջապատուած է իրեն նման բանտարկուած մի այլ «Քրանկ» քահանայի, եւ պատրաստուում է մահուան:

Թէ տանջարանում եւ թէ ապա գլխատման տեղում դահիճները շատ են աշխատում, որ նրան եւս մահմետականացնեն, բայց նա բաց է բաց մերժում է:

Երբ տեսնում են թէ մահուան սպառնալիքը չէ ազդում, փաղաքշական միջոցները են դիմում. բայց Տէր Կոմիտաս հաստատ է մնում իր կրօնի վրայ, հետեւապէս տանում են նրան գլխատելու:

Նահատակութիւնը տեղի ունեցաւ Ստամպոլ, Սուլթան Բայազիտի մզկիթին մօտ, Փարմազ-դափու հրապարակի վրայ, 1707 Նոյեմբ. 5ին: Հրապարակը լեցուել էր ամէն ազգից խոռոն բազմութեամբ: Տէր Կոմիտասի ձեռքերը ետեւից շրթայով կապուած էին, ուստի ձեռքը չկարողանալով շարժել, նա գլխի շարժումով խաշակնքում է եւ աջ ոտքով խաչի նշան անելով գետնի վրայ, այդտեղ ծունկ է չորում:

քաջասիրտ ու բարեպաշտ երէցիկները Մարիամն էր, որ կը յորդորէր զինք իր հաւատքին վրայ հաստատուն մնալ ու բնաւ չհոգալ ոչ զինք, ոչ իր զաւակները, որուն Տէր Կոմիտաս քաղցր ժպիտով մը պատասխանեց: Իսկ միւսն իր քոյրն իրենէ, որ բնական ազդեցութեան տակ, մազերը կը փետտէր եւ կը հրապուրէր իր եղբայրն, որ ի սէր իր ընտանիքին, գէթ առ երեսուսուս եւ ազատի սրոյ մահէն: Բայց անյաղթ նահատակն Քրիստոսի, մերժեց եւ յանդիմանեց իր քոյրը, ի մեծ շինութիւն անհամար հանդիսականներու:

«Այն երկայն ճամբուն վրայ Տէր Կոմիտաս շարունակ այլեւայլ աղօթքներով կը դրազէր: Երբ Թափօրը հասաւ Փարմազ դափու, երանելին դարձաւ իր ընկերներուն եւ զանոնք քաջալերել սկսաւ վերջին անգամ մըն ալ եւ յորդորել, որ իրենց հաւատքին մէջ անսասան մնան մինչեւ վերջ եւ յարեց «հաւատարիկ ես յառաջ կ'անցնիմ ձեզ օրինակ տալու համար»: Դահլճը հրամայեց որ դէմքը դարձնէ դէպի հարաւ (այսինքն մահամետականութեան «գրպլէն»), բայց Տէր Կոմիտաս տեղէն չջարժեցաւ: Ապա դահլճաբտը մօտենալով սիրալիր կերպով քանի մը վայրկեան խօսքի փոխանակութիւն ունեցաւ. այս ուրիշ բան չէր, ինչպէս մօտ եղողները բացայայտ կերպով կրցան լսել, եթէ ոչ յորդոր՝ ուրանալ իր կրօնքն եւ մահամետական դառնալ, որուն երանելին պատասխանած է թէ իր մարմինը կտոր կտոր ընեն չպիտի ուրանայ զՏէր Յիսուս Քրիստոս: Ասկից ետքը Տէր Կոմիտաս սկսաւ ջերմեռանդութեամբ «Հայր մեր, Ողջոյն, եւ Հաւատամքն» ըսել. երբ ասոր հաղիւ թէ կէսին հասած, մահաբեր սուրին օղի մէջ շողալը եւ Սուրբ գլխոյն թաւալլոր գետին իյնալը մէկ եղաւ⁸»:

Իսկ միւս երկու դատապարտեալները, այս տեսարանից սարսափահար մահամետականութիւն ընդունեցին եւ ազատ արձակուեցան:

Դատապարտող վէճերի հրամանով հանդուցեալի մարմինը 3 օր մնում է անթաղ, միեւնոյն տեղը: Բոլոր քրիստոնեաները, հայ, յոյն եւ լատին, անխտիր, խումբ

⁸ «Կաթողիկէ Արձագանդ» շաբաթաթերթ, Կ. Պոլիս 1912/13: Այս յօդուածի հեղինակը՝ Յ. Վ. Մազարեան 1902ին պատրաստել էր Տէր Կոմիտասի այս կենսագրութիւնը. բայց այն ժամանակ թուրք իշխանութիւնները հրաման չէին տուել տպագրելու:

խումբ դալիս են կառավարողներն եւ իրենց թաշկինակները թաթխում են նահատակարեան մէջ: Հանդուցեալի թշնամիները այս յարգանքը տեսնելով վէճերից խնդրում են, որ մարմինը ծով նետեն, որպէս զի ժողովուրդը իրեն Մարտիրոսի մասունք չընդունի: Բայց Տէր Կոմիտասի 16 տարեկան աղջիկը, Աղաւնին, համարձակ կերպով զիմում է վէճերին եւ խնդրում է, որ հրաման տայ իրեն իր հօր մարմինը վերցնելու եւ պատշաճ կերպով թաղելու: Անգութ դատաւորն այս որդիական ազդեցանքի առջին չի դիմանում եւ տալիս է հրամանը: «Այլ հրամանը, շարունակում է նոյն պատմագիրը, կայծակի արագութեամբ տարածուեցաւ Պոլսոյ ամէն կողմը: Երկուշաբթի օրը 7 նոյեմբեր, շատ մը քրիստոնեաներ, ի մասնաւորի յոյներ, ուրախութեամբ դային Փարմազ դափու եւ երանելոյն մարմինը իրենց բազկացը մէջ բառնալով եւ սուրբ գլուխը ուրոյն ծածկոցի մէջ փաթկելով Գում Գարու եկան պատրիարքարանի առջեւ եւ դադաղ մը խնդրեցին, որ չտրուեցաւ իրենց, ուստի իրենց ճամբան շարունակելով մարմինը տարին մինչեւ Սամաթիա: Յունաց պատրիարքը յօժարակամ հրաման տուաւ, որ Սամաթիոյ յոյն եկեղեցիէն թէ դադաղ մը շնորհուի եւ թէ թաղման հանդէսը փառաւորութեամբ կատարուի: Պատրիարքը շատ մը յոյն եպիսկոպոսներ եւ դպիրներ զրկեց, որոնք չբեղ հանդէսով, յոյն ծէսով թաղեցին մարմինը Պալլադիոյ Հայոց Գերեզմանատան մէջ, ի ընտանեկան սեփական շիրիմին մէջ»:

Երկու հարիւր տարուց ի վեր Տէր Կոմիտասի գերեզմանը ուխտատեղի է եղած, ուր խումբ խումբ, հայ, յոյն եւ կաթոլիկ նոյեմբերի 7ին կամ մերձակայ կիրակի օրը, զնում են նրան այցելելու...:

Մի Փրանսացի հեղինակ, որ այն ժամանակ գտնուում էր Թիւրքիայում, Լուզովիկոս Ժ. Ի հրամանով եւ գրել է իր Յիւլիոսիւնները (Voyages du Sieur Paul Lucas), — խօսելով այդ բունի մահամետականացումների մասին, ասում է. «Il n'y eut qu'un prêtre nommé Der Gomidas, qui endura le martyre, avec une fermeté digne des premiers siècles de l'Eglise». (Գտնուեց միայն մի քահանայ, Տէր Կոմիտաս անունով, որ մարտիրոս եղաւ, Եկեղեցու առաջին դարերին արժանի հաստատամտութեամբ:) Եւ իսկապէս այս «միակուրքիւն»

է, որ բարձրացնում է նրա անունն ու արժանաւորութիւնը:

Հանդուցեալի փիլոսոփայն եւ երկու ձեռագիրները պահուում են վենետիկ Միսիթաբեան վանքում⁹:

(Շայտուհայնի): Ս. ՐՈՒՍԵՆ

Պատմա-հնագիտական ուսումնասիրութիւն մ'ունինք մեր առաջ, նուիրուած Խաղբակեան կամ Պոռչեան իշխանական տոհմի պատմութեան: Որոգիքը որչափ ալ բացայայտ կը խօսի, բայց դժուարաւ թէ հասկանալի ըլլայ շատերուն մատենին բովանդակութիւնն եւ ուսումնասիրութեան ծանրակշիւթիւնը. մանաւանդ որ հեղինակի անունը շատ քիչերու ծանօթ է իրրեւ հետամուտ պատմա-հնագիտական ուսումնասիրութեանց, որ մինչեւ այսօր առաւելու պէս բանասէր հոգակուած էր հրատարակելու: Բայց Յովսէփեան ի կոչմանէ հնագէտ է եւ գեղարուեստասէր-պատմիչ: Մասնագիտական աշխատութիւններն իր համարութեան կը սպասեն դեռ բարենշան օրուն:

Էջմիածնի Միտրանութեան այս հայրենասէր, բազմահմուտ եւ անչափ աշխատասէր Սրբազանը բացառիկ երեւոյթ մըն է հայ երականութեան մէջ: Ունի նա նախնական բարեբախտութիւնը եւրոպական համալսարաններու մէջ ձեռք բերած բարձրագոյն կրթութիւնը ի սպաս զնելու հայ ղիտութեան մայր հողի վրայ. ուր իրեն

⁹ Բացի արդէն յիշուած աղբիւրներից, կան ուրեք թէ ժամանակակից եւ թէ մերձաւոր ժամանակի պատմիչներ, որոնք կամ յատկապէս Տէր Կոմիտասի կենսագրութիւնն են գրել եւ կամ իրենց նամակներէ մէջ ու Յիւլիոսիւնների շարքում պատմել են նրա կյանքը հալածանքն ու զիջումները: Pere Jacinthe François-ի, կապուչին կրօնաւոր, Պէրսի քարոզիչ, 1701էն մինչեւ 1707, Պարիզ իր Մեծաւորին գրած նամակները: G. Golubovich, ord. Min. կրօնաւոր (լատիներէն). նկարիչ François Valmour, որ գրած էր, հայր Մատթէոս Եղիսիկացի, մէկը, որ գրած էր քառասուն առաջին աշակերտներից մէկը, որ գրած է իր պատմութիւնը, Միսիթաբեան հաւատարիմ է իր պատմութեան եւ ակնհայտը հաւատարիմ է իր պատմութեան: թղթաթղթի Տէր Գրիգոր, ձէվա-վանքէ լուսով: Թղթաթղթի Տէր Գրիգոր, ձէվա-վանքէ Մաղաքիա Չէլչիկ, Եկեղեցի տիրացու Եղի-գար, Սեղբուսեան Յօհաննէս Չէլչիկ (խալիբէն) եւ Աւգէրեանց Սահիան վարդապետ, ապ. Թրիեստ 1798 թրքերէն:

մերձ կը գտնուին Ձեռագրական ամենաճորի Հաւաքածոյքներ, որոնց մէջ խորամուխ գիտէ համբարել հայ քաղաքակրթութեան պատմութեան համար նիւթեր. ունի իր ապամուծեան հնութիւնները՝ կանգուն կամ ուռջ հայրենի հնութիւնները՝ հետա-աւերակ, գործնք կը սիրէ փնտռել, հետա-դոտել, արուեստախօսել. կը տեսնէ մահար-ձաններ, խաչքարեր, արձանագրութիւններ, եւ կը փորձէ առեղծուլ, լուսարանել, օգտագործել. տարածուած է իր առաջ հայրենի պատմական աշխարհը, գոր կ'ընթա-նայ հետիոտս՝ վեր հանելու նախնեաց քայ-լերու հետքերը: Պէտք չունի ինքը յենուե-լու ուրիշներու սխալ կամ թերի տեղեկու-թիւններու վրայ, այլ անձամբ կարող է թիւններու վրայ, այլ անձամբ կարող է խուզարկել անյայտը, վերստուգել իրակա-նութիւնը:

Այս պայմաններու մէջ կը գործէ Գա-րեգին արքեպիսկոպոս, անխոնջ, ինքնա-մոռաց, անձնագոհ: Նման ժրջան մեղուի կը հաւաքէ նախնեաց բազմադոյն ծաղիկ-ներէն հիւթալեց փոշիները եւ աշխատասէր ջանքով կը վերածէ զանոնք իւր փեթակի մէջ մեղրի եւ կ'ընծայարեթ գիտութեան: Գրիչ եւ վրձին, գրոց եւ բրոց, աշ-խարհ եւ կենցաղ ներդաշնակ համագոր-ծակցութեան կը համախմբուին իր այս աշ-խատութեան մէջ: Պատմութիւն, Աշխար-խատութեան մէջ: Պատմութիւն, Մանրանկարչու-հագրութիւն, Արուեստ, Մանրանկարչու-թիւն եւ Հնագրութիւն ձեռք ձեռք շրջան թիւն եւ Հնագրութիւն վրայ, կենդանի, կ'առնեն թատերարեմի վրայ, կենդանի խօսուն, արտայայտիչ: Երեւոյթներն իրրեւ խօսուն, պատկերներ չեն շարժիր հոն վաղանցիկ պատկերներ, այլ իրրեւ լու-աչքի տեսութեան առջեւ, այլ իրրեւ լու-սապատկերներ կը ներկայացուին, տալու շարժառիթ զննողին՝ խոկալու: Եւ որովհետեւ լու, դատելու եւ զգալու: Եւ ներշնչէ իւր զգայուն է հանդիսագիրը՝ կը ներշնչէ իւր զգայնութեամբ եւ զգալ կու տայ անզգայ զգայարաններու ալ:

Ընդարձակ աշխատութեան Ա. մասն է հատորս, որ լոյս կը տեսնէ Բ. եւ Գ. մա-սերէն տարանջատ՝ միմիայն նիւթական դժուարութիւններու պատճառաւ: Խաղբա-կեան կամ Պոռչեան իշխանական տոհմի քաղաքական գերը պատմութեան մէջ կը կարգէ նիւթն առաջին մասին, որուն պիտի յաջորդեն Բ. մաս՝ «Խաղբակեանց կամ Պոռչեանց հոգեւոր կենդանութիւնն ու վան-գերը» եւ Գ. մաս՝ Յաւելուած. վաւերա-գիրներ եւ արձանագրութիւններ Պոռչեանց պատմութեան հայոյ: